ՀԱՐՑԱՇԱՐ
«ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔ

Հարց 1.

Պետական կազմակերպությունը՝

Շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ոչ առևտրային կազմակերպություն է:

(հոդ. 3, մաս 1)

Հարց 2.
Պետական կազմակերպությունը որպես սեփականություն՝

Ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով:

(հոդ. 3, մաս 2)

Հարց 3.
Պետական կազմակերպությանը սեփականության իրավունքով պատկանող գույքի նկատմամբ հիմնադիրը չունի իրավունքներ, բացառությամբ՝

Պետական կազմակերպության լուծարումից հետո մնացած գույքի:

(հոդ. 4, մաս 3)

Հարց 4.
Պետական կազմակերպության սեփականության վրա կարող է բռնագանձում տարածվել՝

Միայն դատական կարգով:

(հոդ. 4, մաս 5)

Հարց 5.
Հիմնադիրը կարող է պետական կազմակերպությանն անժամկետ և անհատույց օգտագործման իրավունքով ամրացնել՝

Ցանկացած գույք:

(հոդ. 5, մաս 1)

Հարց 6.
Պետական կազմակերպությանն ամրացված գույքի օգտագործման ընթացքում առաջացած անբաժանելի բարելավումները՝

Հիմնադրի սեփականությունն են:

(հոդ. 5, մաս 3)

Հարց 7.
Պետական կազմակերպությունն ստեղծված է համարվում՝

Օրենքով սահմանված կարգով պետական գրանցման պահից:

(հոդ. 10, մաս 2)

Հարց 8.
Պետական կազմակերպության կանոնադրությունը՝

Հանդիսանում է նրա հիմնադիր փաստաթուղթը:

(հոդ. 11, մաս 1)

Հարց 9.
Պետական կազմակերպության կառավարումն իրականացնում են՝

Հիմնադիրը, նրա լիազորած պետական մարմինը, գործադիր մարմինը (տնօրեն, նախագահ, ռեկտոր և այլն):

(հոդ. 12, մաս 1)

Հարց 10.
Պետական կազմակերպության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է՝

Գործադիր մարմինը:

(հոդ. 15, մաս 1)

Հարց 11.
Պետական կազմակերպության լուծարմամբ գործունեությունը դադարում է՝

Առանց իրավունքները և պարտականությունները իրավահաջորդության կարգով այլ անձանց անցնելու:

(հոդ. 25, մաս 1)

Հարց 12.
Պետական կազմակերպության լուծարման դեպքում պետական կազմակերպության պարտատերերի պահանջները բավարարելուց հետո մնացած գույքն ուղղվում է՝

Պետական բյուջե:

(հոդ. 25, մաս 4)